ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

/Տարածքի վարձակալության մասին պայմանագրում փոփոխություն կատարելու մասին/

ՀՀ, քաղաք Երևան

երկու հազար քսաներեք թվականի օգոստոսի երկուսին

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿԻ ԶԱՔԱՐՅԱՆԸ/ծնված՝ 02/01/1965թ-ին, ՀԾՀ՝ 1201650925, անձնագիր՝ AU0455373, տրված՝ 011-ի կողմից, 08/10/2021թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ,ԿԵՆՏՐՈՆ, ԽՈՐԱՅԵԼՅԱՆ Փ., 37 Շ, 10ԲՆ հասցեում, այսուհետ՝ Վարձատու, մի կողմից, և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ» Պետական մարմինը/հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ., 19, 0019, գրանցման համար՝ 264.184.1017475, ՀՎՀՀ՝ 00061508/ ի դեմս գլխավոր քարտուղար ՎԱԶԳԵՆ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ/ծնված՝ 27/03/1977թ-ին, ՀԾՀ՝ 3703770104, նույնականացման քարտ՝ 005216544, տրված՝ 010-ի կողմից, 18/06/2014թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ., 7 Շ, 2ԲՆ հասցեում/, հանդիսանալով «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի իրավահաջորդը, ի դեմս նախագահի Ատոմ Ջանջուղազյանի, որը գործում է Վարձակալի կանոնադրության հիման վրա, որի անունից, համաձայն լիազորագրի, հանդես է գալիս լիազորված անձ ԳՈՒՐԳԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՆԱՍՅԱՆԸ/ծնված՝ 29/09/1980թ-ին, ՀԾՀ՝ 3909800556, անձնագիր՝ AT0674333, տրված՝ 011-ի կողմից, 22/02/2021թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԱՅԳԵՁՈՐԻ Փ., 10 Տ հասցեում//լիազորագիր՝ տրված 02/08/2023թ.-ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ» Պետական մարմնի գլխավոր քարտուղար ՎԱԶԳԵՆ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ կողմից/,այսուհետ՝ Վարձակալ,մյուս կողմից, որոնք ստորև առանձին հիշատակվում են նաև որպես «Կողմ» և միասին՝ որպես «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով և Կողմերի միջև 12.09.2017թ.-ին կնքված Գրասենյակային տարածքի վարձակալության պայմանագրով (գրանցված սեղանամատյանում 1009 համարով. այսուհետ՝ Պայմանագիր), եկան փոխադարձ համաձայնության՝ Պայմանագրում 01.07.2023թ.-ից (երկու հազար քսաներեք թվականի հուլիսի մեկից) հետևյալ փոփոխությունը կատարելու մասին.

1. Պայմանագրի 3.2. կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.2. Տարածքի տի ր ապե տմ ան և օգտագործման համար ամսական վարձավճար (այսուհետ՝ Վարձավճար) է սահմանվում՝ 787.000 (յոթ հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ, որը կներառի Վարձակալի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ նորմալ պայմանների ապահովում, սպասարկում, ջրամատակարարում, իսկ Պայմանագրից բխող հարկային պարտավորությունները վճարում է Վարձակալը:»:

2. Պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:
3. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող /դադարող/ իրավունքները, Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ենթակա են 30-օրյա ժամկետում պետական գրանցման՝ ՀՀ Կադաստրի պետական կոմիտեում, որի հետ կապված անհրաժեշտ ծախսերը կատարում է Վարձակալը:
5. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կնքելուց և նոտարական կարգով վավերացնելուց հետո՝ ՀՀ Կադաստրի կոմիտեում պետական գրանցման պահից:
6. Համաձայնագիրը կնքված է հայերեն, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
7. Կողմերի ստորագրությունները:

| ՎԱՐՁԱՏՈՒ | ՎԱՐՁԱԿԱԼԻ լիազորված անձ |
|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿԻ ԶԱՔԱՐՅԱՆ | ԳՈՒՐԳԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՆԱՍՅԱՆ |
| Հ քաղաքացու անձնագիր՝ AU 0455373, | ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AT 0674333, |
| Հ, Երևան, Խորայելյան փողոց, 37 շենք, 10 բնակարան | ՀՀ, քաղաք Երևան, Այգեձորի փողոց, 10 տուն |
| ստորագրություն | ստորագրություն |
| Արթուր Զաքարյան | Գուրգեն Մանասյան |
| անուն, ազգանուն | անուն, ազգանուն |

...ան ակտի կոդ: 781-20230802-117-7167573
...ական ակտի գաղտնագիր: EVQUYY

ՀՀ, քաղաք Երևան
երկու հազար քսաներեք թվականի օգոստոսի երկուսին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ **ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՏՈՆՈՅԱՆԻՍ** կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում /սպասարկման գրասենյակում/ 30/երեսուն/ աշխատանքային օրյա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 3034 -ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Ռուզաննա Արմենի Տոնոյան